Մրցույթ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի «Խնձորուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հասարակագիտության /8 դասաժամ/, ինֆորմատիկայի /10,5 դասաժամ/, ֆիզկուլտուրայի /27 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում /Ձև 1/,մեկ լուսանկար 3×4 չափի

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/

- անձը հաստատող փաստաթուղթ

- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/

- ինքնակենսագրություն /Ձև 5/

- այլ պետությունների քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ

- հրատարակած հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացվածփաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թ. նոյեմբերի 8-ից մինչև նոյեմբերի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. նոյեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Վայոց ձորի մարզի Խնձորուտի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել 094-65-75-96 հեռախոսահամարով: